

ՌՈՒՍԵՐԵՆԻՅ ԿԻՍԱԿԱՏՃԵՆՈՒՄՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՀԱՅՈՑ ԼԵԶՎՈՒՄ

(ըստ ռուս-հայերեն ընդհանուր բառաբանների տվյալների)

ՄԱՆՈՒԿ ՅԱԼԱԿՅԱՆ

Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարի և հատկապես տերմինաբանության հարստացման ու համալրման միջոցներից մեկը կիսապատճենումն է: Եթե պատճենումը հայոց լեզվում ունի շատ հին ավանդույթներ (առաջին պատճենումներին մենք հանդիպում ենք հայերենի զարգացման գրավոր փուլի ամենավաղ շրջանից), ապա կիսապատճենումը իբրև բառակազմության եղանակ մեր լեզվում ակտիվացել է միայն վերջին տասնամյակներին և այսօր ունի բավական լայն տարածում:

Կիսապատճենման ժամանակ փոխառվում է ոչ թե օտար բառի նյութական հիմքը, այլ փաստորեն միայն նրա կառուցվածքն ու իմաստը: Ընդ որում կիսապատճենվելիս թարգմանվում են նախատիպ-բառի կազմի մեջ մտնող ոչ թե բոլոր ձևույթները, այլ միայն դրանց մի մասը: Այսինքն՝ կիսապատճենումներն այն բառերն են, որոնք կազմված են մասամբ՝ սեփական և մասամբ փոխառյալ ձևույթներից. օրինակ՝ газопроводный — գազամուղային, антиимпериалистический — հակափմպերիալիստական, светотехника — լուսատեխնիկա: Կիսապատճենման օտար՝ փոխառյալ, բաղադրիչը միշտ չէ, որ առաջին անգամ է փոխառվում տվյալ կիսապատճենման ժամանակ: Ընդհանրապես, ճնշող մեծամասնությամբ այդ բաղադրիչները մինչև օտար բառի կիսապատճենում կատարելը արդեն հայտնի են փոխառող լեզվին այլ փոխառություններից: Այդ բաղադրատարրերը, ըստ էության, ընդհանուր են փոխառու և փոխառող լեզուներում, որպես փոխառություն արդեն մուտք են գործել փոխառող լեզվի բառապաշարային համակարգ, հասկանալի են այդ լեզուներով խոսող հանրություններին, որի պատճառով էլ թարգմանության կարիք չեն զգում: Այդ տարրերը փոխառու լեզվում, անհրաժեշտության դեպքում, կարող են սովորական՝ բառային փոխառությունների նման ենթարկվել հնչյունական յուրացման: Թարգմանվում է օտար բաղադրյալ բառի միայն մի բաղադրիչը՝ ըստ նրա կազմության մեջ մտնող ձևույթների: Քանի որ կիսապատճենման ժամանակ օտար բառը մասամբ թարգմանվում՝ պատճենվում է և մասամբ էլ փոխառվում, լեզվաբանության մեջ կիսապատճենումներն սնվում են նաև կիսափոխառություններ կամ խառն փոխառություններ:

Կիսապատճենման առարկա, աղբյուր կարող են հանդիսանալ հիմնականում միայն այն օտար բառերը, որոնք կառուցվածքով բարդ են կամ էլ՝ բաղադրյալ: Սովորաբար թարգմանվում կամ պատճենվում է բարդ բառի մի արմատը, իսկ մյուսը փոխառվում է: Օտար ածանցավոր բառերի կիսապատճենման ժամանակ որպես օրենք փոխառվում է արմատը, իսկ ածանցը կամ ածանցները փոխառող լեզվում փոխարինվում են սեփականներով: Կիսապատճենումներն օտար բառի միայն կառուցվածքի ընդօրինակումներն են: Իսկ այդ բառի իմաստը փոխառու լեզվում յուրացվում, վերարտադրվում է

¹ Տե՛ս «Основы теории лексического калькирования», Алма-Ата, 1974, с. 122; С. В. Гринев, Терминологические заимствования, приложение к кн. Д. С. Лотте, Вопросы заимствования и упорядочения иноязычных терминов и терминологических элементов, М., 1982, с. 116—117.

ամբողջությամբ՝ բառի միաժամանակ և՛ փոխառյալ, և՛ թարգմանված մասերով²։ Ընդհանուր է, կիսապատճենումը հիմնականում կատարվում է օտար բառի կառուցվածքի ընդօրինակությամբ, սակայն փոխառու լեզվում, տվյալ դեպքում հայերենում, նոր բառը կազմվում է անպայման հաշվի առնելով հայերենի բառակազմական օրենքները։ Իսկ հայերեն կիսապատճենման և նրա ուսուցանողների կառուցվածքների լրիվ համընկնման դեպքերը վկայում են երկու լեզուների բառակազմական համակարգերում գոյություն ունեցող որոշ նմանությունների մասին։

Հայոց լեզուն կիսապատճենում է ուսերենի ոչ միայն այն բառերը, որոնք կազմված են երկու հիմնական բառակազմական ձևությամբից, այլև երկուսից ավելի հիմնական ձևությամբ ունեցող տերմինները։ Ընդ որում, այդ կիսապատճենումներում փոխառյալ բաղադրիչը կարող է գտնվել հնարավոր բոլոր դիրքերում՝ ե՛ր բառակազմում (радиотелеграмма-ռադիոտեղեկագիր, электромашиностроение-էլեկտրամեքենաշինություն), ե՛ր բառամիջում (теплоэлектротендер-ջերմաէլեկտրական տնտեսություն, фотоцинкография-ֆոտոսպիկտագրություն), և՛ բարդության վերջում (агролесомелиорация-հողանտառամելիորացիա)։ Իսկ автотанковый բառի կիսապատճենման ժամանակ փոխառվել են երկու եզրերի հիմնական ձևությամբ, և թարգմանվել է միջին բաղադրիչը՝ ավտոգրանատանկային։ Մեկ այլ դեպքում սկզբնաղբյուրի համեմատությամբ փոփոխված են կիսապատճենված բառի բաղադրիչների տեղերը՝ спектрогелиограф—արևասպեկտրագիր։ Հայերենում կատարված է այդ տեղափոխությունը, որովհետև տվյալ բառի բաղադրիչները գտնվում են որոշիչ-որոշյալ հարաբերության մեջ (արևային+սպեկտրագիր), ուր ըստ հայոց լեզվի բառակազմական օրենքների որոշիչը պետք է նախորդի որոշյալին։

Կիսապատճենումներ պետք է համարվեն նաև հայերենի այն բառերը, որոնց մի բաղադրիչն ընդհանուր է հայերենի և ուսերենի համար, իսկ երկրորդը փոխառություն է միևնույն սկզբնաղբյուրից, որ ինքնուրույնաբար կատարել են երկու լեզուները տարբեր ժամանակներում, և որն այսօր արդեն լրիվ՝ թե՛ հնչյունական և թե՛ իմաստային յուրացման է ենթարկված հայոց և ուսաց լեզուներում։ Բնականաբար, այդ դեպքում պատճենված մաս է համարվում հին փոխառությունը, ինչպես՝ АВТОМАТИКА-ավտոմեխանիզմ։ Սակայն միայն կառուցվածքային համապատասխանությունը սկզբնաղբյուր լեզվի ձևին, դեռևս չի նշանակում, թե բառը կիսապատճենված է, քանի որ իր կազմում օտար կամ ոչ ուսերեն բաղադրիչ ունեցող տվյալ բառը կարող էր միաժամանակ կամ տարբեր ժամանակներում սեփական բառակազմական օրենքներով կազմվել և՛ հայերենում, և՛ ուսերենում։ Կիսապատճենման փաստն ապացուցելու համար պետք է հաշվի առնել ոչ միայն բառի կառուցվածքը, իմաստը, այլև տվյալ բառի ստեղծման ժամանակը, լեզուների փոխազդեցության սոցիալ-տնտեսական պայմանները³։ Այսպես, ամենևին հիմք չկա պնդելու, թե հայերենի համակարգի բառը կիսապատճենումն է ուսերենի օժոկար, со-КУРСНИК բառերի։ Հայերեն բառը կազմվել է փոխառյալ հիմքից՝ սեփական բառակազմական միջոցներով և օրենքներով՝ համադասարանցի բառի նմանողությամբ։ Հայերենի բառակազմական կաղապարներով են կազմված նաև աղաբարձություն, լափեմարանություն, ուսաբանություն, սլավոնաբանություն, հուսաբանություն լեզվաբանական տերմինները, որոնք քննարկվող բառաբաններում տեղ են գտել իբրև ուսերենի арабизм, латинизм, руссизм, славянизм, эллинизм հասկացությունների հայերեն թարգմանություններ՝ սեփական բառակազմական միջոցներով ու կաղապարներով։ Մինչդեռ, հակառակ-վերջան բառը հայերենում կիսապատճենումն է ուսական антигитлеровский բառի, որի մասին վկայում է ոչ միայն երկու բառերի կառուցվածքային համա-

² Հմմտ. «Основы теории лексического калькирования», с. 122—123.

³ Հմմտ. С. Б. Мурафова, О расширении таджикской лексики за счет калькирования русских слов и словосочетаний («Вопросы языковедения», 1981, № 2, с. 126).

պատասխանությունը, այլև այն, որ այս հասկացությունը ստեղծվել է վերջերս (մոտ հիսուն տարի առաջ) և հայերենի բառապաշար է մտել ռուսերենի միջոցով։ Այսպես նաև կիսապատճենումներ են ռուսերենից բաղկացած, լեհինա-բառ բառերը, որոնք հեղափոխությունից հետո ուսուց լեզվում ստեղծված նոր հասկացությունների հայերեն համանշանակներն են։

Կիսապատճենումների մի կարևոր առանձնահատկություն էլ այն է, որ դրանք բոլորն էլ իրենց ստեղծման ժամանակ, իսկ մի մասը նաև այժմ, նորա-բանություններ են, քանի որ դրանց առաջացման գլխավոր պատճառը փոխա-ռոզ լեզվին անհայտ նոր առարկաների, իրերի և երևույթների համար սեփական անվանումներ ստեղծելն է։

Մենք քննության ենք ենթարկել 1950—60-ական թվականներին հրատա-րակված մեծածավալ ռուս-հայերեն ընդհանուր բառարաններում⁴ տեղ գտած կիսապատճենումները (ավելի քան ութ հազար բառ), որի ընթացքում, բացի վերը նշված բազմաթիվ լեզուների համար կիսապատճենման ընդհանուր օրի-նաչափություններից, առանձնացրել ենք ռուսերեն բառերի, ինչպես նաև ռուսե-րենի միջոցով փոխառված միջազգային տերմինների կիսապատճենման ըն-թացքում հայոց լեզվի հանդես բերած յուրահատկությունները։

Որոշ դեպքերում բառարաններում հայերեն կիսապատճենումների պատ-ճենված մասը թարգմանված է ոչ թե բառացի, ռուսերեն կամ օտար բառի լիար-ժեք հայերեն համարժեքով, այլ ներկայացված է մոտավոր համանշանակով, մերձանիշով։ Այսպիսի կիսապատճենման նպատակը մեկն է՝ հայերեն առավել ճիշտ ներկայացնել օտար բառի բառիմաստը։ Ռուս-հայերեն ընդհանուր բա-ռարաններում տեղ գտած այսպիսի մոտավոր կիսապատճենումներն ըստ դրանց կազմի մեջ եղած բառակազմական ձևերի բաժանել ենք հետևյալ խմբերի.

ա) ռուսերենում հիմնական բառակազմական ձևերը՝ բառը կամ ար-մատը թարգմանված է իմաստով մոտ հայերեն բառակազմական հիմնական ձևերով՝ բառով կամ բառարմատով։ Այսպես, ռուս-հայերեն քառահատոր բառարանում *авиаматка* բառը թարգմանված է ավիակիր, ռուսերեն բառի երկրորդ բաղադրիչը (*матка*) իր մեջ չունի կրել (կիր) իմաստը, ինչպես թարգմանված է հայերեն (նշանակում է հատուկ՝ սպասարկու, բազային ռազ-մանավ)։ Ար. Ղարիբյանի բառարանում *газомер* տերմինը թարգմանված է հայերեն մի քանի հոմանիշներով, այդ թվում նաև գազածավալաչափ բառով, ուր ճշտված կոնկրետացված է *метр* (հունարեն *metreon* «չափ», *metre* «չափ փում եմ») տերմինատարրի իմաստը. չափվում է գազի հատկապես ծավալը, *радиоэрафия* տերմինը լուսանկարչություն բառի համանմանությամբ թարգ-մանված է ռադիոլուսանկարչություն (թեև *графия*, հունարեն՝ *graphō*, նշանա-կում է «գրում եմ»)։ Այսպես նաև՝ *тырбоход, электроход* բառերը *пароход*— շոգեենավ կազմության օրինակով թարգմանված են տուրբինաենավ, էլեկտրա-ենավ (բառացի կլինեն՝ տուրբինագենաց, էլեկտրագենաց) և այլն։

բ) Ռուսերեն բաղադրյալ բառի երկրորդական բառակազմական ձևերը կիսապատճենման մեջ փոխարինված է հայերեն հիմնական ձևերով՝ բառով կամ բառարմատով (ինքնուրույն գործածություն ունեցող կամ ավելի հաճախ՝ չունեցող), ինչպես՝ *алименты*— ալիմենտատու *амариллоцвете*— ամարիլ-ազգիներ, *амёбозе*— ամեոբազգիներ *багаж*— բազաժառնդ, *балаган*— բալադանատեր, *булочник*— բուլկավաճառ (քառահատորում այս բառը թարգ-մանված է հայերենի հնչյունական օրենքներին ավելի հարազատ բուլկեվա-ցառ ձևով), *бронза*— բրոնզինավառ, *бронзовка*— բրոնզաբզեզ և այլն։

գ) Օտար՝ հիմնականում հունա-լատինական բառակազմական ածանց-ները (հիմնականում վերջածանցները, հազվադեպ՝ նաև նախածանցները) փո-խարինված են հայերեն հիմնական կամ միաթմանակ և՛ հիմնական, և՛ երկ-րորդական բառակազմական ձևերով, ինչպես՝ *акклиматизация*— կլի-

⁴ Ռուս-հայերեն բառարան չորս հատորով, հ. 1—4, Երևան, 1954—1958, Ար. Ղա-րիբյան, Ռուս-հայերեն բառարան, Երևան, 1968։

մալավարժում, аритмия-սիրտախանգար, валторист-վալտոնահար, карьерист-կարիերիստ, карьеризм-կարիերամոլություն, кокаинист-կոկահնամոլ, литраж-լիտրաապարդություն, пансионер-պանսիոնակյաց, պանսիոնարճակ, споруляция-սպորագոյացում և այլն:

Այս, ինչպես և նախորդ խմբի բառերի կիսապատճենման ժամանակ ավելի շուտ նկատի է առնված դրանց իմաստը և ոչ թե կառուցվածքը: Տվյալ դեպքում նույնիսկ կարելի է խոսել այդ հասկացության համար օտար՝ փոխառյալ հիմքից հայերենի ներքին բառակազմական միջոցներով և կաղապարներով սեփական բառի կերտման և ոչ թե կիսապատճենման մասին: Բառերի այս երկու խմբերը կարծես միջին տեղ են գրավում բուն՝ կառուցվածքային կամ բառակազմական կիսապատճենումների և սեփական բառերի միջև, դրանց կազմում առկա փոխառյալ բաղադրիչը հիմք է տալիս ենթադրելու բառի օտար ծագման մասին: Մյուս կողմից՝ հայերեն բառի և սկզբնաղբյուր լեզուներում նույն բառի կառուցվածքային տարբերությունները վկայում են, որ վերը նշված դեպքերում տեղի է ունեցել օտար բառի ոչ լրիվ կիսապատճենում:

դ) Մոտավոր կիսապատճենումների շորորդ խմբի մեջ միավորված են իրենց կազմում օտար բաղադրիչ ունեցող այն հայերեն բառեր, որոնք կազմվել են սկզբնաղբյուր լեզվում ոչ բարդ (կամ այդպիսին չգիտակցվող) բառերից, ինչպես аралня—արալենի, аражис—արախիսենի, сангин—սանգինանկար, соляр (солярка)—սոլյարայուդ, хром—1. քրոմաներկ, 2. քրոմակաշի, циния—ցինածաղիկ և այլն: Այս խմբի մեջ կարելի է մտցնել նաև այն կիսապատճենումները, որոնցում ուսներեն բառի և նրա հայերեն համարժեքի հիմնական բառակազմական ձևույթների քանակը տարբեր է. հայերենը փոխառյալ բառի իմաստը ճշտելու միևնույն նպատակով կիսապատճենման ժամանակ ավելացրել է ևս մեկ արմատ, ինչպես՝ радио+теле+граф—2. ռադիո+հեռա+գրա+տուն, цинко+графия—2. ցինկա+գրա+տուն, электро+провод—էլեկտրա+հաղորդա+լար և այլն:

Ռուս-հայերեն ընդհանուր բառարաններում տեղ գտած կիսապատճենումներում մեծ մասամբ չեն թարգմանվում՝ պատճենվում, ուսներեն բառի կազմում եղած այսպես կոչված միջազգային տերմինատարրերը: Այդպիսի բաղադրատարրեր ունեցող բառերը հենց ուսաց լեզվում արդեն կիսապատճենումներ են, և հայերենն այդ բառերը փոխառելիս պատճենում է դրանց ուսական մասը՝ միջազգային տերմինատարրը կամ տարրերը վերցնելով անփոփոխ, օրինակ՝ авиапочта-ավիափոստ, автозавод-ավտոգործարան, газоочиститель-գազամաքիչ, гелиогравиюра-հելիոփորագրություն, икс-лучи-իքս-ճառագայթներ, кинопромышленность-կինոարդյունաբերություն, ультракрасный-ուլտրակարմիր, фотоиллюстрация-ֆոտոնկարադարձում, хлористоводородный-քլորաջրածնային, электрозащита-էլեկտրապաշտպանություն, энергоёмкость-էներգատարողություն և այլն: Այն կիսապատճենումները (ինչպես նաև բուն ուսներենում ինքնուրույնաբար ստեղծված այն բառերը), որոնցում միջազգային տերմինատարրը բաղադրության վերջին եզրն է, ուսաց լեզվում նախորդների համեմատ ավելի սակավաթիվ են, օրինակ՝ англо-ман, германофоб, светфор, славянофил, французомания և այլն: Հայերենում այս բառերը սովորաբար գործածվում են թարգմանաբար: Ռուսաց լեզվում ամբողջովին միջազգային տերմինատարրերով կազմված բառերի պատճենված տարբերակները գործածվում են շատ հազվադեպ, իսկ հիմնականում տարածված են հենց բուն միջազգային տերմինները՝ առանց թարգմանության, իբրև փոխառություններ: Ի տարբերություն սրա, հայոց լեզուն, հետևելով իր տերմինաշինական դարավոր ավանդույթներին և հիմնվելով իր բառակազմական ճկուն և հարուստ համակարգի վրա, միշտ էլ ձգտում է պատճենել, կիսապատճենել բոլոր նոր տերմինները, այդ թվում նաև միջազգային տերմինները կամ էլ սեփական բառամթերքով ստեղծում է դրանց համարժեքները: Ժամանակակից հայոց լեզուն փոխառությունների է դիմում միայն այն դեպքում,

երբ լրիվ սպառված են տվյալ նոր հասկացության կամ առարկայի, իրի հայերեն անվանումը կերտելու բոլոր հնարավորությունները, իսկ սեփական բառայնություն էլ չի ստեղծված: Ասվածը վերաբերում է նաև ռուսերենի միջոցով հայոց լեզվին անցած բազմաթիվ միջազգային տերմիններին: Ճիշտ է, քննարկվող բառարաններում թարգմանական՝ հայկական բաժնում այդ բառերը մեծ մասամբ ներկայացված են միաժամանակ և՛ իբրև փոխառություն, և՛ որպես պատճենում կամ կիսապատճենում, սակայն այսօր ավելի հաճախակի գործածվում են և առավել հանձնարարելի են համարվում դրանց հայկական տարբերակները:

Ռուսերենի միջոցով փոխառված միջազգային տերմիններ կամ միջազգային տերմինատարրերով կազմված բազմաթիվ բառեր կիսապատճենելիս (նաև պատճենելիս) հայերենը հիմնվում է ծագումաբանորեն սկզբնաղբյուր լեզուներում դրանց ունեցած նշանակությունների, իսկ հունա-լատինական բաղադրատարրերով կերտված տերմինների համար այդ բաղադրիչների հունարենում և լատիններենում ունեցած իմաստների վրա. օրինակ՝ бактериофаг — բակտերիակեր (հունարեն phagos «ուտող, խժռող» բառից), балетоман-բալետամուլ (հունարեն mania «մոլուցք, հրապուրանք» բառից), малъриолог, малъриологич-մալարիաբան, մալարիաբանություն (հունարեն logos «խոսք, բան, հասկացություն, ուսմունք» բառից, органогрaфия-օրգանագրություն (հունարեն grapho «գրում եմ»՝ ձևից), ооспора- ձվասպոր (հունարեն оо «ձու» բառից), прокамбий-նախակամբիում (լատիններեն pro «նախասկզբի» ձևից), полипoид-պոլիպակերպ (հունարեն eidos «կերպ» ձևից), плацкарта-տեղաքարա (գերմաներեն Platz «հրապարակ, տեղ» բառից), субдоминанта-ենթադոմինանտ (լատիններեն sub «ենթա», տակը» ձևից), торфотерапия-տորֆարուսում (հունարեն therapeia «խնամք, բուժում»), эквипотенциаль-ный-համապոտենցիալ (լատիններեն aequus «հավասար, համաչափ») և այլն: Այս բոլոր բառերն էլ պետք է համարել ռուսերենի միջոցով կատարված կիսապատճենումներ, քանի որ հայոց լեզուն դրանք փոխառել է ռուսերենից և ոչ թե այն լեզուներից, որտեղ դրանք կերտվել են և ապա միայն՝ կիսապատճենել:

Ժամանակակից արևելահայերենը կատարում է նաև ռուսերեն հապավումների պատճենումներ և կիսապատճենումներ: Երբեմն ռուսական հապավումները հայերեն փոխառվում են նույնությամբ: Յուրացվելով հայոց լեզվում, այդ բառերը ենթարկվում են նրա հոլովման օրենքներին, կարող են հոգ ստանալ, կազմել հոգնակի և այլն: Քննարկվող բառարաններում ներկայացված են որոշ թվով այդպիսի հապավումներ. օրինակ՝ գազа, դом, դром, уагг-սի, 65-я, սովխоз, ունիվերսитет և այլն: Սակայն այս բառերի փոփոխության ժամանակ հայերենում չի գիտակցվում դրանց հապավված լինելը, այդ պատճառով էլ սրանք փոխառվում են որպես սովորական պարզ բառեր՝ ռուսերենում ընդունված իմաստներով: Այն դեպքերում, երբ գիտակցվում է ռուսերեն բառն իբրև հապավում, փոխառության ժամանակ չի կատարվում տվյալ բառի (հապավման) հնչյունական յուրացում, այլ հապավումը պատճենվում կամ կիսապատճենվում է: Ընդ որում, թարգմանվում կամ կիսապատճենվում է ոչ թե ռուսերենի բուն հապավումը, այլ այն բառակապակցությունը, որը տվյալ հապավման հիմքն է: Եվ ապա միայն այդ թարգմանված կապակցության համար սեփական բառակազմական միջոցներով, հայոց լեզվի հապավման օրենքներին համապատասխան կազմվում է տվյալ անվանման հայերեն հապավումը, ինչպես՝ АТС (автоматическая телефонная станция)-ավտոմատ հեռախոսային կայան՝ ՈՀԿ, МТС (машинно-тракторная станция)՝ մեքենա-տրակտորային կայան՝ ՄՏԿ, артбаза (артиллерийская база)-հրետանային բազա՝ հրետեղա, горсовет (городской совет)՝ քաղաքային սովետ՝ քաղաքային, жилфонд (жилой фонд)՝ բնակարանային ֆոնդ՝ բնակֆոնդ, ком-

партия (коммунистическая партия)-կոմունիստական կոուակցութիւն՝ կոմ-կոուակցութիւն, промфинплан (промышленно-финансовый план)-արդյու-նաբերական-ֆինանսական պլան՝ արդ ֆինպլան և այլն:

Քանի որ ուսերեն անվանման հայերեն հապաված ձեւը կազմվում է սեփական բառակազմական միջոցներով, ապա շատ հաճախ նկատվում է փոխառված՝ կիսապատճենված հապավման կառուցվածքային անհամապատասխանություն սկզբնաղբյուրին: Հիմնականում ուսական տառային հապավումները հայոց լեզվում ունենում են վանկային կամ վանկատառային համարժեքներ, օրինակ՝ ВЛКСМ— ՀամԿԵՄ, ВКП(б)— ՀամԿ(բ)Կ, ЦИК— Կենտգործկոմ, ГЭС— հիդրոէլեկտրակայան (նաև՝ ՀէԿ) և այլն: Այս երևույթը բացատրվում է հայերենում գոտ տառային հապավումների (մանավանդ, երբ գրանցում չկա ձայնավոր) ոչ բարեհնչունությամբ⁵: Երբեմն տարբեր են լինում միևնույն անվանման ուսերեն և հայերեն հապավումներում եղած հապաված բառահատվածների՝ հապավումների քանակները. սա բխում է երկու լեզուների բառակազմական համակարգերի տարբերություններից: Հայերենում փոխառյալ ուսերեն հապավման որևէ մի հապաված կամ կրճատված բաղադրիչ հաճախ գրվում է լրիվ՝ առանց հապավման, օրինակ՝ военкомат— զինկոմիտե-րիատ (բայց՝ наркомат— ժողովատ), колхоз— կոլտնտեսություն, комсомо-— կոմերիտություն, селькомпас— պելենգակողմնացույց (սա հայերենում արդեն ոչ թե հապավում է, այլ՝ բարդ բառ) և այլն: Հակառակ երևույթը, երբ ուսերեն բառավանկային կամ վանկաբառային հապավումն ունի հայերեն համարժեք՝ միայն վանկային հապավման տեսքով, ավելի հազվադեպ է հանդիպում ինչպես՝ редколлегия— խմբով:

Ուսաց և հայոց լեզուների շարադասություններում գոյություն ունեն էական տարբերություններ, որի պատճառով էլ կան դեպքեր, երբ միևնույն բառակապակցության ու նրա հայերեն թարգմանության ուսերեն և հայերեն հապավումներում հապավումների դասավորությունն այլ է, ինչպես комсомо-— կոմունիստիկական միություն (կոմունիստական երիտասարդության միություն): Որոշ դեպքերում էլ ուսերեն հապակցության հապաված անվանման փոխառության ժամանակ հայոց լեզ-վում չի ստեղծվում նոր հապավում, այլ գործածվում է ուսական հապավման հիմքն հանդիսացող բառակապակցության թարգմանությունը, օրինակ՝ генштаб-գլխավոր շտաբ, госфонд-պետական ֆոնդ, домком-տնային կոմիտե, драмкружок-դրամատիկական խմբակ, комбриг-քրիդադի հրամանատար, педпрактика-մանկավարժական պրակտիկա, эвакупункт-էվակուացման կետ և այլն:

Ինչպես նշեցինք, հայերենում այն կիսապատճենումները, որոնցում թարգմանված բաղադրիչը գտնվում է բարդության սկզբում, անհամեմատ ավելի փոքր քանակ են կազմում, քան այնպիսիք, որոնցում առաջին բաղա-դրիչը փոխառություն է: Այս տարբերությունը գալիս է սկզբնաղբյուր լեզվից՝ ուսերենից, որտեղ նույնպես ավելի բազմաթիվ են այն կիսապատճենված տերմինները, որոնց մեջ սեփական բաղադրիչը հաջորդում է միջազգային տերմինատարին:

Հայոց լեզվում ուսերենից կամ ուսերենի միջոցով կատարված այն կի-սապատճենումները, ուր պատճենված է օտար տերմինի առաջին բաղադրա-տարրը, իսկ փոխառված՝ վերջինը, կարելի է ստորաբաժանել, ըստ ծագման, երկու ենթախմբի: Առաջին ենթախմբի մեջ (որն ավելի մեծաքանակ է) մըա-նում են այն կիսապատճենված տերմինները, որոնք փոխատու լեզվում՝ ու-սերենում, ունեն սեփական բաղադրիչ+օտար՝ միջազգային տերմինատարի կաղապարը (հաշվի չենք առնում բառի ուսաց լեզվում ունեցած վերջածանց-

⁵ Հմմտ. «Интернациональные элементы в лексике и терминологии». Харьков, 1980, с. 167.

ները)։ Այս դեպքում կիսապատկենումն ժամանակ թարգմանվում է ռուսերեն բաղադրիչը, իսկ միջազգային տերմինատարրը փոխառվում է. եթե ռուսերենում բառն ունի վերջածանց, ապա այն փոխարինվում է համապատասխան հայկականով, օրինակ՝ воднотранспортный-շրատրանսպորտային, высоко-вольный-բարձրավոլտ, двувалентный-երկվալենտ, железобетон-երկաթ-բետոն, иглофильтр-ասեղնաֆիլտր, межпарламентский-միջպառլամենտական, мелкобуржуазный-մանրբուրժուական, полуавтомат-կիսավտոմատ, пародинамо-շագերիամո, теплотехника-ջերմատեխնիկա և այլն։

Հայոց լեզուն, հավատարիմ մնալով իր ավանդույթներին, ձգտում է հնարավորին չափ՝ պատճենման կամ կիսապատճենման միջոցով թարգմանել նաև ռուսերենի միջոցով փոխառված միջազգային բառերը։ Այսպիսի կիսապատճենումները, որոնցում թարգմանված է ռուսերենի միջոցով փոխառված միջազգային տերմինի առաջին բաղադրատարրը, իսկ երկրորդը թողնված է անփոփոխ, կազմում են երկրորդ ենթախումբը, օրինակ՝ биомеханика—կենսամեխանիկա, геохимия-երկրաքիմիա, гидротурбина-ջրատուրբին, гидромеханика-ջրամեխանիկա, макроспоры-մեծասպորներ, микрококк-մանրակոկ, ринопластика-քթապլաստիկա, ферровольфрам-երկաթավոլֆրամ, телекино-հեռուստակինո և այլն։

Ռուսաց և հայոց լեզուների լեզվական համակարգերում գոյություն ունեցող տարբերությունները պատճառ են դառնում ռուսերեն որոշ բառերի հայերեն թարգմանության ժամանակ ռուս-հայերեն ընդհանուր բառարաններում նկարագրական-բացատրական եղանակի կամ բառակապակցության օգտագործման համար։ Ասվածը հավասարապես վերաբերում է նաև ռուսերենի այն բառերի հայերեն թարգմանությանը, որոնք իրենց կազմում ունեն օտար, ոչ ռուսերեն բաղադրիչ կամ միջազգային տերմինատարր։ Քանի որ հայոց լեզվին խորթ են ռուսերենի բառակազմական որոշ կառուցվածքներ, և հայերենը չունի դրանց համապատասխան բառակազմական սեփական կաղապարները, ապա ռուսերենի այդ կարգի բառերը թարգմանելիս օգտվում է բառակապակցություններից։ Ըստ որում, ռուսական բառի մեջ եղած միջազգային կամ օտար տերմինատարրը փոխառվում է՝ ենթարկվելով հնչյունական ու ձևաբանական (քերականական) յուրացման, իսկ ռուսերեն կամ ռուսերենում այդպիսին գիտակցվող բաղադրիչը թարգմանվում է համարժեք հայերեն բառով, ինչպես՝ авиасоединение-ավիացիոն միավորում, зооферма-կենդանաբուծական ֆերմա, карто-фелесортировка-կարտոֆիլի տեսակավորում, кинопередвижка-շրջիկ կինո, лжедемократия-կեղծ դեմոկրատիկա, правооппортунистический-աջ օպորտունիստական, птицеферма-թռչնաբուծական ֆերմա, социальноопасный-սոցիալապես վտանգավոր, турбобур-տուրբինային հորատիչ և այլն։

Կարող են բառակապակցություններով թարգմանվել նաև միայն ռուսերեն բաղադրիչներով կազմված կամ ռուսերենում օտար բաղադրատարրերով ինքնուրույնաբար ստեղծված մի քանի բառեր։ Նման դեպքերում ռուսերեն բառի բաղադրատարրերից մեկը մինչև տվյալ բառի փոխառումը կամ թարգմանությունը արդեն նախապես, ավելի վաղուց փոխառված է լինում հայերենում, իսկ իսկ մյուս բաղադրիչը թարգմանվում է, օրինակ, зерносовхоз-հացահատիկային սովխոզ, правоуклонист-աջ ուկլոնիստ, десятикопеечный-ասար կոպեկանոց և այլն։ Հատկապես հաճախ են բառակապակցությամբ թարգմանվում ռուսերենի -ка, -овка, -щик, -щица, -ник, -ница, -ец վերջածանցներով կազմված, ռուսաց լեզվի բառապաշարի խոսակցական շերտին պատկանող բառերը, որոնք հայերենում ճշող մեծամասնությամբ մեկ բառով՝ լազմըված համարժեքները չունեն։ Այս կարգի բառերի կիսապատճենման ժամանակ հայոց լեզուն ռուսերեն բառի հիմքը փոխառում է, իսկ ածանցը փո-

խարինում է ավելի բառում նրա ունեցած նշանակությանը համապատասխան հայերեն բառով, ինչպես՝ алиментщина-տլիմենտ վճարող կին, ալիմենտ ստացող կին, СОЛОНКА-բոլոնյան շնիկ, ДЕПОВЕЦ-դեպուլի բանվոր, МЕТРОВКА-ծալովի մետր և այլն: Այսպես՝ բառակապակցություններով են թարգմանվում նաև տարբեր հիվանդություններով տառապող մարդկանց ցույց արվող բառերը, օրինակ՝ астма-астматик-ասթմայով հիվանդ, дистрофия-դիստրոֆիկով հիվանդ, ревматизм-ռևմատիզմով հիվանդ, склеротик-սկլերոզով տառապող և այլն:

Հայոց լեզուն կիսապատճենման է ենթարկում ռուսերենի ոչ միայն բարդ բառերը, այլև պարզածանցավորները: Վերջինների կիսապատճենում լինելու հարցում սովետական լեզվաբանության մեջ միասնական մոտեցում չկա: Հետազոտողների մի մասը (ինչպես Ն. Մ. Շանսկին⁶, նրան է հետևում նաև Է. Մ. Ախունդյանովը⁷) այդ խմբի բառերը համարում է կիսապատճենում, ճիշտ է, ընդգծելով, որ այս կարգի ոչ լրիվ պատճենումները շատ մոտ են, թեև ամբողջությամբ չեն նույնանում փոխառող լեզվի ներքին բառակազմական օրենքներով և կաղապարներով բառի սովորական բառակազմական մշակմանը: Մասնագետների մյուս մասը փոխառյալ արմատ-սեփական ածանց կաղապարով կառուցված բառերը համարում է ավելի շուտ պատճենված վերջածանցով փոխառություններ⁸: Ըստ երևույթին ավելի հավանական է առաջին կարծիքը, քանի որ նշված բառերը սովորական կիսապատճենումների օրինակով կազմված են սեփական և օտար՝ փոխառյալ բաղադրիչներից՝ փոխառու լեզվում տվյալ բառի ունեցած բառակազմական կառուցվածքի նմանությամբ: Այսինքն՝ այս բառերը լրիվ համապատասխանում են կիսապատճենումներին ներկայացվող պահանջներին (այստեղ, փաստորեն, էական նշանակություն չունի բառի մեկից ավելի հիմնական ձևերից, թե մեկ հիմնական և մեկ կամ մի քանի երկրորդական ձևերից կազմված լինելը):

Պարզածանցավոր բառերը ռուսերենից և ռուսերենի միջոցով կիսապատճենելիս, հայոց լեզուն, որպես օրենք, փոխառում է դրանց արմատը, իսկ ածանցը փոխարինում է սեփականով: Պարտադիր կերպով այդպես են կիսապատճենվում ռուսերենի ածանցավոր ածականները և մակբայները, օրինակ՝ базисный-բազիսային, гидролизный-հիդրոլիզային, директорский-դիրեկտորական, рекордный-ռեկորդային, նաև՝ абстрактно-աբստրակտորեն, демократически-դեմոկրատորեն, тактично-տակտով, теоретически-թեորիապես և այլն: Կիսապատճենված մակբայները քննարկվող բառարաններում շատ ավելի քիչ են քան իրականում գործածում է հայոց լեզուն: Սա բխում է բառարանների կազմման սկզբունքներից: Ռուսական բառարանագրության մեջ, ընդհանրապես ընդունված չէ բառացանկ մտցնել մակբայները (բառահատոր ռուս-հայերեն բառարանի հեղինակները բառարանի ռուսական բառացանկում մակբայներին համեմատաբար շատ տեղ են հատկացրել):

Հայերենում բավականին մեծ թիվ են կազմում ռուսերենից կիսապատճենված ռուսերենի -ость, -ство վերջածանցավոր վերացական գոյականները, -ание, -ение, -ация վերջածանցներով կազմված բայանուն գոյականները: Պետք է նշել, որ այդ բառերի մի մասը ռուսերենում կիսապատճենումներ են տարբեր լեզուներից, և հայերենն էլ դրանք փոխառելով՝ փոխում է միայն ածանցը՝ հիմքը թողնելով նույնը, օրինակ՝ академическое-ակադեմիականություն, активизация и активизирование-ակտիվացում,

⁶ Տե՛ս Н. М. Шанский, Лексические и фразеологические кальки в русском языке («Русский язык в школе», 1955, № 3, с. 32); նաև Է. Մ. Шанский, Лексикология современного русского языка, М., 1964, с. 108—109.

⁷ Տե՛ս «Вопросы татарского языкознания», кн. 2, Казань, 1965, с. 51.

⁸ Տե՛ս «Основы теории лексического калькирования», с. 133—136.

вакцинация-վակցիանացում, валентность-վալենտականություն, капраль-
ство-կապրալություն, логальность-լեգալություն, маневрирование-մանե-
րում, циннизация-ցիննիացում, юнкерство-յունկերություն և այլն:

Անմիջապես ռուսերենից են կիսապատճենված -ԱՆՈՒՄ ածանցով առ-
սերեն կամ ռուսերենում կազմված վերացական գոյականները, օրինակ՝
а-ракчевщина-արակչենականություն, базаровщина-բազարովականություն,
зубатовщина-զուբատովականություն, кампанейщина-կամպանիականություն,
кар амазовщина-կարամազովականություն, маниловщина-մանիլովականու-
թյուն, обломовщина-օբլոմովականություն, хлестаковщина-խլեստակովու-
թյուն և այլն: Սակայն այս բառերը, որոնք մեծ մասամբ պատմական, քաղա-
քական, հրապարակախոսական տերմիններ են և վերցված են բուն ռուսական
կյանքից, հայերենում ավելի հաճախ գործածվում են իբրև փոխառություններ
(ազեֆովչինա, արակչենկչինա, զեմշչինա, ստոլիպինչինա, օբլոմովչինա),
քանի որ դրանց կիսապատճենումը ինչ-որ չափով աղավաղում է ռուսերեն բա-
ռի իմաստը և լրիվ համարժեք չէ սկզբնաղբյուրին:

Համեմատաբար փոքրաթիվ են ռուսերենի նախածանցավոր պարզ բառե-
րի կիսապատճենումները: Սակայն այստեղ նկատվում է մեկ այլ առանձնա-
հատկություն. սրանք հիմնականում բուն ռուսերեն բառեր են, թեև քիչ չեն նաև
փոխառյալ նախածանցներով կազմված բաղադրությունները (վերջիններս մեծ
մասամբ տերմիններ են): Հայերենը առավել հաճախ կիսապատճենում է ռու-
սերենի և ռուսերենում փոխառյալ ժխտական նախածանցներով (նաև այլ նա-
խածանցներով) բառերը, ինչպես՝ аномальный-անոմալ, безалкоголь-
ный-անալկոհոլ, бесплановость-անպլանայություն, декартелизация-ապլա-
կարտիզացում, денацификация-ապանացիատականացում, неактивный-ան-
ակտիվ, некорпированный-չկոպերացված, նաև՝ вице-канцлер-փոխ-
կանցլեր, внепарламентский-արտապարլամենտական, вкутьриатомный-
ենքատոմային, перебазирование-վերաբազավորում, подскипер-փոխ-
զկիպեր, և այլն: Այստեղ նկատվում է մի հետաքրքիր առանձնահատկություն:
Ռուսերենի ու-ածանցով կազմված որոշ մակրային հայոց լեզուն, ելնելով
բառակազմական սեփական միջոցների յուրահատկությունից, կիսապատճե-
նում է իբրև վերջածանցավոր բաղադրություններ, օրինակ՝ ու-больше-
вистски-բուշևիսկի, ու-ленински-լենինարար, ու-чиновничьи-չինովնի-
կարար: Նույն երևույթն է տեղի ունեցել նաև сверхлимитный ածականը
թարգմանելիս՝ լիմիտանց: Իսկ ռուսերեն газонепроницаемость բարդ բառի
հայերեն կիսապատճենման ժամանակ բարդությունն երկրորդ բաղադրիչի ժխ-
տական նախածանցը տեղափոխված է բառասկիզբ՝ անգազանցիկություն, ան-
գազաթափանցություն: Այս ձևն ավելի հարազատ է հայերենի արտասանու-
թյանը, քան ռուսերեն բառի կառուցվածքի ճշգրիտ պատճենումը (գազանթա-
փանցություն կամ գազաանթափանցություն):

Այսպիսով, քննարկվող ռուս-հայերեն ընդհանուր բառարաններում տեղ
գտած հայերեն կիսապատճենումները երևան են բերում հետևյալ հիմնական
առանձնահատկությունները.

ա) հայերեն կիսապատճենումները ռուսերեն բարդ բառերի կառուցված-
քային ճշգրիտ կրկնօրինակներն են, ընդ որում սկզբնաղբյուր լեզվի բառի
կամ տերմինի բաղադրատարրերից մեկը կամ մի քանիսը փոխառվում են, իսկ
մյուսները թարգմանվում են իրենց լիարժեք հայերեն համարժեքներով:

բ) Հայոց լեզուն կիսապատճենում է ռուսերենի ոչ միայն բարդ բառերը,
այլև՝ պարզածանցավորները, որի ընթացքում, որպես օրենք, փոխառվում է
ռուսերեն բառի արմատը, իսկ ածանցը փոխարինվում է համապատասխան
հայկական երկրորդական բառակազմական ձևով:

դ) Ձգտելով առավելագույն ճշտությամբ ներկայացնել սկզբնաղբյուրի բառիմաստը, հայերենը կիսապատճենման ընթացքում ուսերեն բառի պատճենվող մասը երբեմն թարգմանում է ոչ թե լիարժեք հայերեն համարժեքով, այլ՝ մերձանիշով:

զ) նույն նպատակով որոշ դեպքերում ուսերեն պարզ կամ պարզածանցավոր բառերը հայերենում կիսապատճենվում են բարդ կամ բարդածանցավոր համանշանակներով:

կ) երբ հայոց լեզվում չկա փոխառության սկզբնաղբյուրի կառուցվածքին համապատասխան բառակաղմական կաղապար, հայերենը դիմում է բառակապակցությամբ կիսապատճենման օգնությանը:

զ) Հայոց լեզուն, հիմնվելով հապավման սեփական օրենքների, յուրահատկությունների վրա, կիսապատճենում է ուսական հապավումների մի մասը:

է) Հայերենը կիսապատճենման է ենթարկում ոչ միայն ուսերեն բառերը, այլև ուսերենի միջոցով փոխառված միջազգային տերմինները: Այս դեպքում թարգմանվում է բառի ծաղումնարանորեն սկզբնաղբյուր լեզվում առանձնացվող բաղադրիչներից մեկը, իսկ մյուսը փոխառվում է: Ընդ որում, այստեղ նույնպես հնարավոր են մոտավոր կիսապատճենման դեպքեր:

О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ РУССКИХ ПОЛУКАЛЕК В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

(по данным русско-армянских общих словарей)

МАНУК ФАЛАКЯН

Резюме

Полукалькирование является одним из средств пополнения армянской терминологии. Этот способ заимствования иностранных слов особенно активизировался в последние десятилетия. Армянские полукальки с русских слов обнаруживают следующие основные особенности:

а) армянские полукальки являются точными словообразовательными следами русских слов, где одна часть русского слова заимствована, а другая переведена на армянский язык;

б) иногда калькируемая часть русского слова с целью более точной передачи его значения на армянский язык переводится приближенным эквивалентом;

в) с той же целью некоторые русские простые или производные слова полукалькируются на армянский язык сложными или сложно-суффиксальными эквивалентами;

г) в тех случаях, когда в армянском языке нет соответствующих моделей полукалькируемых русских слов, в словарях эти слова переводятся армянскими словосочетаниями, в которых один из компонентов заимствован;

д) в современном восточноармянском языке полукалькируются и некоторые русские аббревиатуры;

е) в армянском языке полукалькируется также часть международных терминов, заимствованных через русский язык.